ՏԵՂԵԿԱՆՔ

««ՀԱՏՈՒԿ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Գ Լ ՈՒ Խ 3.

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆԸ

Հոդված 10. Պետական պահպանություն իրականացնող մարմինը և ծառայության պետի լիազորությունները

1. Պետական պահպանությունն իրականացնող մարմինը ծառայությունն է, որը վարչապետին ենթակա պետական կառավարման համակարգի մարմին է:

2. Ծառայության կառավարումն իրականացնում է վարչապետը, իսկ անմիջական ղեկավարումը՝ ծառայության պետը, որն անմիջականորեն ենթակա և հաշվետու է վարչապետին: Ծառայության պետի բացակայության ժամանակ վերջինիս պարտականությունները վարչապետի որոշմամբ կատարում է ծառայության պետի տեղակալներից մեկը:

3. Ծառայության պետը՝

1) պատասխանատու է ծառայության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

2) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

3) կառավարում է ծառայության ենթակայությանը հանձնված կազմակերպությունները և հիմնարկները.

4) նշանակում և ազատում է իր խորհրդականին, իր և տեղակալի օգնականներին.

5) օրենքով կամ ծառայության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է ծառայության ծառայողներին և աշխատողներին, զինվորական ծառայությունից արձակում է ծառայության ծառայողներին, խրախուսում կամ կարգապահական պատասխանատվության է ենթարկում ծառայության ծառայողներին և աշխատողներին.

6) հաստատում է հաստիքացուցակը.

7) հաստատում է ներքին աշխատակարգը.

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստեղծում է իրեն կից խորհրդակցական մարմիններ.

9) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում իր տեղակալի հանձնարարականները.

10) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների, ծառայության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների ու հիմնարկների ղեկավարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները, ցուցումները, հանձնարարականները.

11) լսում է կառուցվածքային ստորաբաժանումների, ծառայության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

12) սահմանում է իր տեղակալների, ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների լիազորությունները և պատասխանատվության աստիճանը.

13) կատարում է պարտականությունների բաշխում իր և իր տեղակալների միջև.

14) ներկայացնում է ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում ու միջազգային կազմակերպություններում.

15) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ և տալիս ցուցումներ, որոնց կատարումը պարտադիր է ծառայության համար, կազմակերպում է դրանց կատարման ստուգումը.

16) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնում է առաջարկություններ ծառայության ծառայողներին և աշխատողներին պետական պարգևներով պարգևատրելու և պատվավոր կոչումներ շնորհելու վերաբերյալ.

17) ծառայության ծառայողներին և աշխատողներին պարգևատրելու համար հիմնում է մեդալներ և կրծքանշաններ, հաստատում դրանց կանոնադրությունները և նկարագրությունները.

18) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծում է ծառայության գործունեության ապահովման համար անհրաժեշտ կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման հարցերը.

19) վերահսկում է ծառայության կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման գործընթացը.

19.1.) սահմանում է ծառայության ծառայողների ֆիզիկական և կրակային պատրաստականության նորմատիվները, ինչպես նաև հաստատում է ֆիզիկական և կրակային պատրաստականության պարապմունքների ժամանակացույցերը.

19.2.) հաստատում է պետական պահպանության ոլորտի գործառույթին առնչվող մեթոդական ուղեցույցները և ուսումնական ձեռնարկները.

20) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ որոշում է ծառայության ծառայողների և աշխատողների՝ համատեղությամբ աշխատանքի պայմանները.

21) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ծառայության ծառայողներին և աշխատողներին թույլատրում է դուրս գալ Հայաստանի Հանրապետության սահմաններից.

22) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է ծառայությանն ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները (նաև արտարժութային), ծառայությանը հատկացված ֆինանսական միջոցների (այդ թվում՝ արտարժութային) կարգադրիչն է.

23) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին սահմանված կարգով զինվորական ծառայության է ընդունում ծառայությունում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունում է որոշում նրանց աշխատանքային ստաժը երկարամյա ծառայության մեջ հաշվարկելու վերաբերյալ, ինչպես նաև ծառայությունում զինվորական ծառայության է ընդունում պահեստազորում չգտնվող կանանց.

24) սահմանված կարգով շնորհում է զինվորական կոչումներ՝ գնդապետի կոչումը ներառյալ, ներկայացնում է միջնորդություն ծառայության ղեկավար ծառայողներին զինվորական բարձրագույն սպայական կազմի կոչումներ շնորհելու վերաբերյալ.

25) ստորագրում և սահմանված դեպքերում կնքում է ծառայության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերը.

26) սահմանված կարգով ներկայացնում է առաջարկություններ ծառայության ծառայողների և աշխատողների թվի, ինչպես նաև դրա կառուցվածքի փոփոխությունների վերաբերյալ.

27) ծառայության ծառայողներին և աշխատողներին, ինչպես նաև ծառայության առջև դրված խնդիրների լուծմանն աջակցած անձանց պարգևատրելու համար ունի պարգևատրման ու նվիրատվության միջոցներ (այդ թվում՝ հրազեն և սառը զենք).

28) իր իրավասության սահմաններում որոշում է ծառայության կողմից օտարերկրյա պետությունների հատուկ ծառայություններին ու իրավապահ մարմիններին օպերատիվ տեղեկատվության, հատուկ տեխնիկական և այլ միջոցների փոխանցման կարգը.

29) ծառայության կողմից օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացվելիս որոշում է օպերատիվ միջոցառումների անցկացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծախսման չափն ու կարգը.

30) ընդունում է որոշում օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և իրավապահ մարմինների պատվիրակություններին ընդունելու, ինչպես նաև ծառայության պատվիրակություններին օտարերկրյա պետություններ ուղարկելու մասին.

31) հաստատում է ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները և կառուցվածքները.

32) սահմանում է ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների պետերի ու նրանց տեղակալների գործառնական պարտականությունները.

33) որոշում է ծառայության ծառայողների և աշխատողների գործուղման հետ կապված հարցերը.

34) օրենքի համաձայն՝ ծառայության համակարգի ծառայողների և աշխատողների համար սահմանում է սոցիալական պաշտպանվածության այլ երաշխիքներ՝ կապված նրանց ծառայության (աշխատանքի) առանձնահատկությունների հետ.

35) թույլատրում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների և օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների համար պայմանագրային հիմունքներով կադրերի պատրաստումը.

36) իր իրավասության սահմաններում ընդունում և օրենքով սահմանված կարգով հրապարակում է ենթաօրենսդրական (այդ թվում՝ օրենքով նախատեսված դեպքերում նորմատիվ) իրավական ակտեր.

37) ծառայության ծառայողներին և աշխատողներին թույլատրում է սովորել հեռակա ուսուցմամբ ուսումնական հաստատություններում.

38) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և ծառայության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

3.1. Ծառայության պետն օգտվում է «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ (բացառությամբ առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանելու) մասերով, 15-րդ հոդվածի 1-ին մասով, 15.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 18-րդ հոդվածի 5-րդ մասով, 26-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 2-րդ մասով, 35-րդ հոդվածի 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 3-րդ մասով, 37-րդ հոդվածի 4-րդ մասով, 41-րդ հոդվածի 3-րդ մասով, 43-րդ հոդվածի 7-րդ մասով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 3-րդ մասով, 47-րդ հոդվածի 1.1-ին և 3-րդ մասերով լիազոր մարմնի ղեկավարին վերապահված լիազորություններից՝ պետական պահպանությունն իրականացնող մարմնում ծառայության հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման մասով:

4. Պետական պահպանության առանձին օբյեկտի պահպանությունն անմիջականորեն ղեկավարում է պետական պահպանության օբյեկտի պահպանության ղեկավարը:

5. Ծառայության կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, ծառայողների և աշխատողների քանակը հաստատում է վարչապետը, իսկ ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, կառուցվածքները և ծառայողների և աշխատողների գործառնական պարտականությունները, ինչպես նաև ծառայության ծառայողների վկայականների տրամադրման կարգը հաստատում է ծառայության պետը: Ծառայությունը կարող է ունենալ ինչպես հիմնական մասնագիտական, այնպես էլ աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ:

6. Ծառայության հաստիքները ենթակա են համալրման նաև պայմանագրային հիմունքներով քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց կողմից, որոնք ծառայողներ չեն, և նրանց աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

7. Պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովմանը և պահպանվող օբյեկտների պաշտպանությանը օրենքով ամրագրված իրենց լիազորությունների սահմաններում մասնակցում են նաև անվտանգության ապահովման մյուս պետական մարմինները:

Հոդված 11. Ծառայության հիմնական խնդիրները

Ծառայության հիմնական խնդիրներն են՝

1) պետական պահպանության օբյեկտներին սպառնացող վտանգը կանխատեսելը և բացահայտելը, այդ սպառնալիքների կանխարգելման համար համալիր միջոցառումներ իրականացնելը.

2) պետական պահպանության օբյեկտների անվտանգությունն ապահովելը նրանց մշտական կամ ժամանակավոր գտնվելու վայրում, այդ թվում՝ երթևեկության ժամանակ.

3) իրենց իրավասության շրջանակներում համապատասխան կապի կազմակերպումը և իրականացումն ապահովելը.

4) իրենց իրավասության շրջանակներում ահաբեկչության դեմ պայքարին մասնակցելը.

4.1.) իրենց իրավասության շրջանակներում ազգային անվտանգության ապահովմանը մասնակցելը.

5) պահպանվող օբյեկտները պաշտպանելը.

6) պահպանվող օբյեկտներում հանցագործությունները և այլ իրավախախտումները բացահայտելը, կանխելը և խափանելը.

7) պահպանվող օբյեկտներում սահմանված անցագրային ռեժիմը և կարգն ապահովելը.

8) պետական պահպանության օբյեկտների շտապ և անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումն ապահովելը նրանց մշտական կամ ժամանակավոր գտնվելու վայրերում, այդ թվում՝ երթևեկության ժամանակ:

Հոդված 13. Ծառայության իրավունքները

Ծառայությունը պետական պահպանություն իրականացնելու նպատակով իրավունք ունի՝

1) պահպանական միջոցառումների նախապատրաստման և իրականացման նպատակով ներգրավել անհրաժեշտ ուժեր և միջոցներ.

2) օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենսդրությանը համապատասխան, իր լիազորության շրջանակներում, իրականացնել օպերատիվ-հետախուզական գործունեություն.

3) պահպանվող օբյեկտներում կազմակերպելու և իրականացնելու օպերատիվ տեխնիկական զննումներ, իսկ համապատասխան ծառայությունների և կազմակերպությունների ներգրավմամբ իր իրավասության շրջանակներում՝ նաև սանիտարահիգիենիկ, ռադիացիոն և հակահամաճարակային, ինչպես նաև պետական

պահպանության օբյեկտներին օրենքով սահմանված կարգով տրամադրվող բժշկական օգնության ու սպասարկման ապահովման նկատմամբ հսկողություն.

4) պահպանվող օբյեկտներ մուտք և ելք կատարելու ժամանակ ստուգել պաշտոնատար անձանց և քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերը, կատարել նրանց, ինչպես նաև նրանց մոտ գտնվող իրերի, նրանց տրանսպորտային միջոցների և դրանցով տեղափոխվող իրերի զննում, այդ թվում՝ կիրառելով տեխնիկական միջոցներ.

5) կատարել փաստերի և իրադարձությունների փաստաթղթավորում, լուսանկարում, ձայնագրում և տեսանկարահանում.

6) ձերբակալել և համապատասխան մարմիններին հանձնել պահպանվող օբյեկտներում իրավախախտումներ կամ իրավախախտման փորձ կատարած այն անձանց, ովքեր խոչընդոտել են պետական պահպանության մարմնի օրինական պահանջների կատարմանը, ինչպես նաև ապօրինաբար մուտք են գործել կամ փորձ են արել ապօրինաբար մուտք գործել պահպանվող օբյեկտներ.

7) պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին միջնորդել՝ վերացնելու պետական պահպանության օբյեկտների և պահպանվող օբյեկտների անվտանգությանն սպառնացող պատճառները և պայմանները.

8) անարգել մուտք գործել բնակելի տարածքներ, շենքեր, շինություններ, հողամասեր, եթե հապաղումը կարող է սպառնալիք առաջացնել պետական պահպանության օբյեկտների անվտանգության համար:

Եթե սույն կետով նախատեսված գործողությունները կատարվել են քաղաքացիների կամ պաշտոնատար անձանց կամքին հակառակ՝ զուգորդվելով այդ անձանց ազատությունից զրկելով, ապա ծառայությունն այդ մասին 24 ժամվա ընթացքում տեղյակ է պահում տվյալ տարածքի դատախազին.

8.1.) իր կանոնադրական գործառույթներն իրականացնելիս՝ հանցագործությունների կանխարգելման, հանցագործություն կատարած կամ դրանց կատարման մեջ կասկածվող անձանց հետապնդելու և ձերբակալելու, շտապ և անհետաձգելի բժշկական օգնության կարիք ունեցող ֆիզիկական անձանց բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ հասցնելու, ինչպես նաև պետական պահպանության օբյեկտների և պահպանվող օբյեկտների անվտանգության սպառնալիքների կանխարգելման համար, անհետաձգելի դեպքերում օգտագործել ֆիզիկական անձանց և կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցները, եթե ողջամտորեն հնարավոր չէ այլ եղանակով հասնել սույն կետում նշված

նպատակներին: Ծառայությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությանը համապատասխան, պարտավոր է հատուցել ֆիզիկական անձանց և կազմակերպությունների պատճառած վնասը: Սույն կետում նշված նպատակների համար չեն կարող օգտագործվել դիվանագիտական, հյուպատոսական, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչներին, միջազգային կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցները.

9) անհրաժեշտության դեպքում միջոցներ ձեռնարկել տրանսպորտային միջոցների և հետիոտնի երթևեկությունը ժամանակավորապես սահմանափակելու ուղղությամբ, արգելել տրանսպորտային միջոցների և քաղաքացիների գտնվելը որոշակի վայրերում և օբյեկտներում, ինչպես նաև տեղափոխել տրանսպորտային միջոցներն այդ վայրերից, եթե դրանք կարող են խոչընդոտող արգելք հանդիսանալ պետական պահպանության իրականացման համար.

10) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից անվճար ստանալ իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն.

11) իրականացնել ծածկագրային աշխատանքներ.

12) թույլատրել ծառայության ծառայողներին՝ օրենքով սահմանված կարգով պահել, կրել, օգտագործել հրազեն և հատուկ միջոցներ.

~~**13) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցել.**~~

14) ապահովել սեփական անվտանգությունը.

15) օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների, իրավապահ մարմինների և կազմակերպությունների հետ իր իրավասության շրջանակներում փոխանակել օպերատիվ տեղեկատվություն, հատուկ տեխնիկական և այլ միջոցներ, ինչպես նաև պայմանավորվել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման կարգի և պայմանների մասին.

16) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցել իր իրավասությանը վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի նախագծերի մշակմանը:

Հոդված 15.3. Ծառայության պետի և ծառայության պետի՝ ոչ զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնող տեղակալների կողմից ֆիզիկական ուժի գործադրումը, հատուկ միջոցների և զենքի կիրառումը

1. Ծառայության պետը և ծառայության պետի՝ ոչ զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնող տեղակալներն իրավունք ունեն գործադրելու ֆիզիկական ուժ, կրելու, պահելու և կիրառելու հատուկ միջոցներ և զենք՝ սույն օրենքով ծառայության ծառայողների համար նախատեսված դեպքերում և կարգով:

2. Ծառայության պետին և ծառայության պետի՝ ոչ զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնող տեղակալներին կրելու, պահելու և կիրառելու իրավունքով հատկացվում են ծառայության տնօրինության տակ գտնվող հատուկ միջոցներ և զենք: Ծառայության պետին և ծառայության պետի՝ ոչ զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնող տեղակալներին հատուկ միջոցներով, զենքով և ռազմամթերքով ապահովելու կարգը, հատուկ միջոցների, զենքի և ռազմամթերքի ցանկը, հատուկ միջոցների, զենքի և ռազմամթերքի հետ անվտանգ վարվելու կանոնները, ինչպես նաև հատուկ միջոցների և զենքի կիրառման ուսուցման կազմակերպման կարգը սահմանում է վարչապետը:

Հոդված 16. Ծառայությունը ծառայությունում

1. Ծառայությունը համալրվում է **միայն** Հայաստանի Հանրապետության քաղաքացի զինծառայողներով:

Ծառայության սպաները և ենթասպաները զինծառայողներ են և զինվորական ծառայությունն անցնում են ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը կարգավորող օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

2. Ծառայողական պարտականությունները կատարելիս ծառայության ծառայողի՝ իր իրավասության սահմաններում առաջադրած պահանջների կատարումը պարտադիր է բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների և քաղաքացիների համար:

3. Ծառայողական պարտականությունները կատարելիս ծառայության ծառայողի օրինական պահանջները չկատարելը կամ նրա պարտականությունների կատարմանը խոչընդոտելն առաջացնում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

4. Ծառայության ծառայողների մասնագիտական պատրաստումը, վերապատրաստումը և որակավորման բարձրացումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

5. Ծառայության զինծառայողների միասնական համազգեստի և տարբերանշանների նկարագիրը հաստատում է վարչապետը:

Հոդված 16.1. Ծառայության ծառայողների պաշտոնների խմբերը, պաշտոնների անվանացանկը և զինվորական կոչումները

1. Ծառայության ծառայողների պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

1) ծառայության ծառայողների բարձրագույն պաշտոններ՝ ծառայության պետի տեղակալներ.

2) ծառայության ծառայողների գլխավոր պաշտոններ՝ ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների պետեր.

3) ծառայության ծառայողների ավագ պաշտոններ՝ ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների պետերի տեղակալներ, ոչ ինքնուրույն ստորաբաժանումների պետեր և նրանց տեղակալներ.

4) ծառայության ծառայողների միջին պաշտոններ՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ և 5-րդ կետերում չընդգրկված պաշտոններ.

5) ծառայության ծառայողների կրտսեր պաշտոններ՝ ենթասպաներով համալրվող պաշտոններ:

2. Ծառայության ծառայողների պաշտոնների գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերը կարող են բաժանվել ենթախմբերի:

3. Ծառայության ծառայողների պաշտոնների գլխավոր խումբը կարող է բաժանվել ենթախմբերի՝ վարչապետի որոշմամբ, իսկ ծառայության ծառայողների պաշտոնների ավագ, միջին և կրտսեր խմբերը կարող են բաժանվել ենթախմբերի՝ ծառայության պետի հրամանով:

4. Ծառայության ծառայողների պաշտոնների առանձին խմբերում ընդգրկվող հիմնական պաշտոնների, ինչպես նաև այդ պաշտոններին հավասարեցված պաշտոնների անվանացանկը սահմանում է վարչապետը:

5. Ծառայության ծառայողներին, որպես զինծառայողների, շնորհվում են զինվորական կոչումներ: Ծառայությունում սահմանվում են սպայական և ենթասպայական հետևյալ կազմերն ու կոչումները.

Կազմերը	Կոչումները
Ավագ ենթասպայական	ենթասպա ավագ ենթասպա
Սպայական	
կրտսեր սպայական	լեյտենանտ ավագ լեյտենանտ կապիտան
ավագ սպայական	մայոր փոխգնդապետ գնդապետ
բարձրագույն սպայական	գեներալ-մայոր գեներալ-լեյտենանտ

6. Ծառայության ծառայողների պաշտոնների խմբերին համապատասխանում են կոչումների հետևյալ վերին սահմանները.

1) ծառայության ծառայողների բարձրագույն պաշտոններին համապատասխանող կոչումների վերին սահմանը գեներալ-լեյտենանտի կոչումն է.

2) ծառայության ծառայողների գլխավոր պաշտոններին համապատասխանող կոչումների վերին սահմանը գեներալ-մայորի կոչումն է.

3) ծառայության ծառայողների ավագ պաշտոններին համապատասխանող կոչումների վերին սահմանը գնդապետի կոչումն է.

4) ծառայության ծառայողների միջին պաշտոններին համապատասխանող կոչումների վերին սահմանը մայորի կոչումն է.

5) ծառայության ծառայողների կրտսեր պաշտոններին համապատասխանող կոչումների վերին սահմանն ավագ ենթասպայի կոչումն է:

7. Ծառայության պետը, կախված ավագ, միջին և կրտսեր պաշտոնների խմբերից (ենթախմբերից), սահմանում է նշված խմբերի կոնկրետ պաշտոններին համապատասխանող կոչումների ստորին և վերին սահմանները:

8. Ծառայության ծառայողների բարձրագույն և գլխավոր պաշտոնների խմբերի կոնկրետ պաշտոնին համապատասխանող կոչումների ստորին և վերին սահմանները սահմանում է վարչապետը:

9. Ծառայության ծառայողների բարձրագույն սպայական կազմի կոչումները շնորհում է Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ՝ օրենքով սահմանված կարգով:

10. Ծառայության ծառայողների ավագ և կրտսեր սպայական, ինչպես նաև ավագ ենթասպայական կազմերի կոչումները շնորհում է ծառայության պետը:

11. Ծառայության ծառայողների կոչումները շնորհվում են անհատական կարգով:

12. Սույն օրենքի 16.2-րդ հոդվածի 7-րդ մասում նշված պետական մարմնում ծառայություն անցած (աշխատած) և հատուկ կոչում (դասային աստիճան, որակավորման դաս) ունեցող քաղաքացիներին ծառայությունում պաշտոնի նշանակելիս շնորհվում է նրանց ունեցած հատուկ կոչմանը (դասային աստիճանին, որակավորման դասին) համապատասխան կոչում, իսկ հերթական կոչումները շնորհվում են «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով: Սույն օրենքի 16.2-րդ հոդվածի 7-րդ մասում նշված պետական մարմիններում շնորհված հատուկ կոչումների (դասային աստիճանների, որակավորման դասերի), ինչպես նաև պահեստազորում ունեցած կոչումների համապատասխանությունը սույն օրենքով սահմանված կոչումներին սահմանում է Կառավարությունը:

Հոդված 16.2. Ծառայության ծառայողին պաշտոնի նշանակելու պայմանները, պաշտոնի նշանակելը և ազատելը

1. Ծառայության պետի տեղակալ կարող է նշանակվել այն ծառայողը, որը մինչև նշանակումն զբաղեցրել է ծառայության ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն կամ մինչև նշանակումն առնվազն ~~3~~ 1 տարի զբաղեցրել է ծառայության ծառայողների գլխավոր խմբի պաշտոն և ունի գնդապետից ոչ ցածր կոչում:

~~2. Ծառայության ծառայողների գլխավոր խմբի պաշտոններում ատեստավորման արդյունքով կարող են նշանակվել այն ծառայողները, որոնք մինչև նշանակումը վերջին մեկ տարին զբաղեցրել են ծառայության ծառայողների գլխավոր խմբի այլ պաշտոն կամ մինչև նշանակումը վերջին երեք տարին զբաղեցրել են ծառայության ծառայողների ավագ խմբի որևէ պաշտոն: Ծառայության ծառայողների գլխավոր խմբի պաշտոններում~~

~~կարող է նշանակվել նաև ծառայության ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցրած ծառայողը:~~

2. Ծառայության ծառայողների գլխավոր խմբի պաշտոններում կարող են նշանակվել այն ծառայողները, որոնք մինչև նշանակումը վերջին մեկ տարին զբաղեցրել են ծառայության ծառայողների գլխավոր խմբի այլ պաշտոն կամ մինչև նշանակումը վերջին մեկ տարին զբաղեցրել են ծառայության ծառայողների ավագ խմբի որևէ պաշտոն:

~~3. Ծառայության ծառայողների ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է ատեստավորման արդյունքով՝ տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո:~~

3. Ծառայության ծառայողների ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո, իսկ կրտսեր խմբի պաշտոններում՝ անկախ տվյալ պաշտոնում ծառայության տևողությունից:

3.1. Ծառայությունում ծառայողների ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ընթացակարգով:

3.2. Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված ժամկետներում հաշվարկվում են նաև պաշտոնեական պարտականությունների ժամանակավոր կատարման ժամկետները:

~~4. Ծառայության ծառայողների կրտսեր խմբի պաշտոններում նշանակումները կատարվում են առանց ատեստավորման:~~

5. Ծառայության ծառայողների ավագ և միջին խմբերի պաշտոններում նշանակումը կատարվում է բարձրագույն կրթության առկայության դեպքում:

6. Ծառայության ծառայողների կրտսեր խմբի պաշտոններում նշանակումը կատարվում է առնվազն միջնակարգ կրթության առկայության դեպքում:

7. Ծառայությունում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են ընդունվել նաև զինված ուժերի, ազգային անվտանգության մարմինների, ոստիկանության, արտաքին հետախուզության ծառայության, հարկադիր կատարումն ապահովող ծառայության, փրկարար ծառայության, քրեակատարողական ծառայության մարմինների, Քննչական կոմիտեի, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներ, դատախազներ (այդ թվում՝ նշված մարմիններում և պաշտոններում նախկինում ծառայած կամ աշխատած անձինք),

ինչպես նաև ծառայության նախկին ծառայողներ, որոնք բավարարում են տվյալ պաշտոնին նշանակվելու համար ծառայության ծառայողներին ներկայացվող պահանջները:

7.1. Սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված պետական մարմինների և ծառայության պաշտոնների համապատասխանությունը սահմանում է Կառավարությունը:

8. Ծառայության ծառայողների գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոնների ծառայողներին պաշտոնի նշանակում ու պաշտոնից ազատում է ծառայության պետը**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:**

Հոդված 16.3. Ծառայությունում ծառայության հետ կապված հարաբերությունները

1. Ծառայությունում ծառայությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կանոնադրություններով և կանոնագրքերով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, իսկ ծառայությունում ծառայության անցնելու համար ներկայացվող պահանջների, ծառայողների՝ պաշտոնի նշանակման, տեղափոխման և պաշտոնից ազատման, պաշտոնի և պաշտոնեական պարտականությունների ժամանակավոր կատարման, ծառայողների՝ ծառայության նոր վայր տեղափոխման, կոչումների շնորհման և զրկման, իջեցման ու վերականգնման, կոչումների շնորհման ժամկետների, ~~ծառայողների ատեստավորման,~~ վերապատրաստման, ուսումնառության, ուսումնական ծախսերի փոխհատուցման, կադրերի տրամադրության տակ թողնելու (բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի), աշխատաժամանակի տևողության, հանգստի ժամանակի, հերթապահության, արձակուրդի, ծառայողների իրավունքների, պարտականությունների, ծառայողների նկատմամբ կիրառվող սահմանափակումների, ծառայողին հրամաններ տալու սահմանափակումների, ծառայության ժամկետների (բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ ծառայության ժամկետները երկարաձգելու դեպքերի), ծառայության ժամկետի հաշվարկման կարգի, ծառայությունից արձակման, ծառայության կամ պաշտոնում վերականգնման, ծառայությունից արձակված ծառայողներին տրվող վճարումների, արտոնությունների ~~և կենսաթոշակի ապահովման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են~~ **հետ կապված հարաբերությունները՝ սույն օրենքով չկարգավորված մասով, կարգավորվում են, կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է** «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքով, իսկ ծառայողների սոցիալական

պաշտպանվածության ու երաշխիքների, ծառայությունում շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողների զինվորական ծառայություն անցնելու կարգի (բացառությամբ սույն օրենքի 17.1-ին հոդվածի 3-~~13~~ 23-րդ մասերով նախատեսված՝ հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման) հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով:

2. Ծառայողական անհրաժեշտությունից ելնելով՝ ծառայության ծառայողը կարող է թողնվել կադրերի տրամադրության տակ ծառայության մի կառուցվածքային ստորաբաժանումից մինչև ծառայության մեկ այլ կառուցվածքային ստորաբաժանում տեղափոխվելը՝ մինչև 2 ամիս ժամկետով: Սույն մասով նախատեսված դեպքում կադրերի տրամադրության տակ գտնվելու ամբողջ ժամանակահատվածում ծառայողին վճարվում է նրա զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը:

3. Ծառայությունում սահմանվում են նաև քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց հաստիքներ, որոնք զբաղեցնող անձինք ծառայողներ չեն, և նրանց աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

4. Սահմանային տարիքի հասած ծառայողների՝ ծառայությունում ծառայության ժամկետները տվյալ պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է երկարաձգել մինչև 10 (բարձրագույն սպայական կազմի ծառայողներինը՝ մինչև 5) տարի ժամկետով՝ հաշվի առնելով համապատասխան ծառայողի գիտելիքները, հմտությունները, ունակությունները և ֆիզիկական պատրաստվածությունը:

5. Ծառայությունում 20 և ավելի տարի անբասիր ծառայած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությանն առանձնակի ծառայություններ մատուցած սպայական և ենթասպայական կազմերի ծառայողներին, անկախ ծառայությունում ծառայության ընդհանուր ժամկետից, ծառայության պետի հրամանով կարող է վերապահվել զինվորական համազգեստ կրելու իրավունք: Ծառայության բարձրագույն սպայական կոչում ունեցող ծառայողները ծառայությունից արձակվելուց հետո իրավունք ունեն կրելու զինվորական համազգեստ:

~~**Հոդված 17.1. Ծառայության-ծառայողի վարձատրությունը**~~

1. Ծառայության յուրաքանչյուր ծառայող (սույն օրենքի 16.3-րդ հոդվածի 2-րդ մասով և «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածով սահմանված դեպքերում նաև կադրերի տրամադրության տակ գտնվողները) ունի վարձատրության իրավունք:

2. Ծառայության ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով:

3. Ծառայության ծառայողներին հավելավճար հաշվարկելու նպատակով իրականացվում է ատեստավորում: Հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման կարգը սահմանվում է վարչապետի որոշմամբ: Հավելավճար հաշվարկելու նպատակով իրականացվող ատեստավորման՝ սույն հոդվածով սահմանված կարգը տարածվում է նաև ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողների վրա:

4. Ծառայության ծառայողները հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորմանը մասնակցում են կամավոր:

5. Ծառայության ծառայողների պաշտոն առաջին անգամ զբաղեցնող ծառայողները կարող են դիմել հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման համար՝ պաշտոնի նշանակվելու օրվանից ոչ շուտ, քան երեք ամիս հետո:

6. Ծառայության ծառայողների պաշտոն զբաղեցնող, հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորված և սահմանված չափով հավելավճար ստացող ծառայողներին հաշվարկված հավելավճարը վճարվում է երկու տարի ժամկետով: Հավելավճարի վճարումը շարունակելու նպատակով ծառայողը կարող է դիմել հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման համար սույն մասով նախատեսված ժամկետը լրանալուց առնվազն երկու ամիս առաջ:

7. Հրի կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ծառայողը հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման համար կարող է դիմել ոչ շուտ, քան արձակուրդից վերադառնալուց երեք ամիս հետո:

8. Արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ ծառայողը կարող է դիմել հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման համար ծառայության անցնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

9. Հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման համար դիմած ծառայողը ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում է

~~հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման անցկացման ժամկետի մասին:~~

~~10. Հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման արդյունքներով կայացվում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը.~~

~~1) հաշվարկել հավելավճար.~~

~~2) շարունակել հավելավճարի հաշվարկումը.~~

~~3) չհաշվարկել հավելավճար:~~

~~11. Հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու կամ հավելավճարի հաշվարկումը շարունակելու իրավունք ձեռք չբերած ծառայողը տվյալ տարվա ընթացքում հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորում անցնելու համար կարող է դիմել ոչ ավելի, քան երկու անգամ, որի արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում հավելավճարը հաշվարկվում է այդ իրավունքը ձեռք բերելու օրվանից:~~

~~12. Հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորվող ծառայողը պարտադիր ծանոթանում է ատեստավորման արդյունքներին և կայացված եզրակացությանը: Հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորվող ծառայողն իրավունք ունի վերադասության կարգով բողոքարկելու ատեստավորման արդյունքները և կայացված եզրակացությունը՝ դրանց ծանոթանալու օրվանից հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում:~~

~~13. Ծառայության ծառայողներին սույն հոդվածով սահմանված հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի չափերը և վճարման կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ: Հավելավճարի հաշվարկման կարգը և հաշվարկված հավելավճարի վճարումը դադարեցնելու հիմքերը սահմանվում են վարչապետի որոշմամբ: Սույն մասի համաձայն հավելավճար հաշվարկելու դեպքում ծառայողներին «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված լրավճարը և պայմանագրային զինվորական ծառայության պաշտոնի համար սահմանված հավելումը չեն հաշվարկվում:~~

Հոդված 17.1. Ծառայության ծառայողի վարձատրությունը և ատեստավորումը

1. Ծառայության յուրաքանչյուր ծառայող (սույն օրենքի 16.3-րդ հոդվածի 2-րդ մասով և «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածով սահմանված դեպքերում նաև կադրերի տրամադրության տակ գտնվողները) ունի վարձատրության իրավունք:

2. Ծառայության ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով:

3. Ծառայության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի ծառայողներին հավելավճար հաշվարկելու նպատակով իրականացվում է ատեստավորում (այսուհետ՝ ատեստավորում): Ատեստավորման կարգը սահմանվում է վարչապետի որոշմամբ: Ատեստավորման՝ սույն հոդվածի դրույթները տարածվում են նաև ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողների վրա:

4. Ատեստավորումն անցկացվում է ատեստավորման կարգը սահմանող վարչապետի որոշմամբ նախատեսված հանձնաժողովի (հանձնաժողովների) կողմից:

5. Ծառայության ծառայողները ատեստավորմանը մասնակցում են կամավոր:

6. Ծառայությունում առաջին անգամ պաշտոնի նշանակված ծառայողները (այդ թվում՝ սույն օրենքի 16.2-րդ հոդվածի 7-րդ մասում նշված անձինք) ատեստավորվելու համար կարող են դիմել պաշտոնի նշանակվելու օրվանից հետո՝ ոչ շուտ, քան երեք ամիս հետո, իսկ մասնագիտական վերապատրաստման պարտադիր դասընթացներ անցնող ծառայողները՝ ոչ շուտ, քան դասընթացներն ավարտելուց երկու ամիս հետո:

7. Առաջխաղացման կարգով բարձր պաշտոնի նշանակված ծառայողներն ատեստավորվելու համար կարող են դիմել պաշտոնի նշանակվելու օրվանից հետո՝ ոչ շուտ, քան երեք ամիս հետո:

8. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերում ցածր պաշտոնի նշանակված ծառայողներն ատեստավորվելու համար կարող են դիմել կարգապահական տույժը հանվելուց հետո:

9. Ծառայության ծառայողների պաշտոն զբաղեցնող, ատեստավորված և սահմանված չափով հավելավճար ստացող ծառայողներին հաշվարկված հավելավճարը վճարվում է երկու տարի ժամկետով: Հավելավճարի վճարումը շարունակելու նպատակով ծառայողը կարող է դիմել ատեստավորման համար սույն մասով նախատեսված ժամկետը լրանալուց ոչ շուտ, քան երեք ամիս առաջ:

10. Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող ծառայողը կարող է դիմել ատեստավորման համար ոչ շուտ, քան արձակուրդից վերադառնալուց երկու ամիս հետո:

11.Կադրերի տրամադրության տակ գտնվող կամ պաշտոնավարումը կասեցված ծառայողը կարող է դիմել ատեստավորման համար ոչ շուտ, քան ծառայության անցնելուց երկու ամիս հետո:

12. Ատեստավորման համար դիմած ծառայողը ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում է հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման անցկացման ժամկետի մասին:

13. Ատեստավորման արդյունքներով կայացվում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը.

1) ենթակա է հավելավճար հաշվարկելու.
2) ենթակա չէ հավելավճար հաշվարկելու:

14. Ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում հավելավճարը հաշվարկվում է «ենթակա է հավելավճար հաշվարկելու» եզրակացությունը կայացվելու օրվան հաջորդող ամսվա 1-ից:

15. Այն ծառայողը, որի վերաբերյալ ատեստավորման արդյունքներով կայացվել է «ենթակա չէ հավելավճար հաշվարկելու» եզրակացությունը, հավելավճար հաշվարկելու նպատակով նոր ատեստավորում անցնելու համար կարող է դիմել «ենթակա չէ հավելավճար հաշվարկելու» եզրակացության կայացման օրվանից հետո, ոչ շուտ քան երեք ամիս հետո:

16. Ատեստավորվող ծառայողը պարտադիր ծանոթանում է ատեստավորման արդյունքներին և կայացված եզրակացությանը: Ատեստավորվող ծառայողն իրավունք ունի վերադասության կարգով բողոքարկելու ատեստավորման արդյունքները և կայացված եզրակացությունը՝ դրանց ծանոթանալու օրվանից հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում, կամ դատական կարգով:

17. Ատեստավորումներն անցկացվում են ծառայության պետի հրամանով հաստատված ժամանակացույցին համապատասխան:

18. Ծառայողին ցածր (բացառությամբ կարգապահական տույժ ստանալու հետևանքով) կամ հավասար պաշտոնի նշանակելու դեպքում նրա ատեստավորման արդյունքները պահպանվում են, և նա շարունակում է ստանալ նախորդ պաշտոնի համար հաշվարկված հավելավճարը:

19. Առաջխաղացման կարգով բարձր պաշտոնի նշանակված ծառայողը մինչև նոր պաշտոնում ատեստավորվելը շարունակում է ստանալ նախորդ պաշտոնի համար հաշվարկված հավելավճարը:

20. Եթե հավելավճար ստանալու իրավունք ձեռք բերած ծառայողն ատեստավորվել է բարձր պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարման ընթացքում, ապա առաջխաղացման կարգով տվյալ պաշտոնին նշանակվելու դեպքում նրա ատեստավորման արդյունքները պահպանվում են:

21. Եթե ատեստավորման արդյունքներով կայացվել է «ենթակա է հավելավճար հաշվարկելու» եզրակացությունը, որից հետո ծառայողին տրամադրվել է հղիության և ծննդաբերության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ, կամ ծառայողը թողնվել է կադրերի տրամադրության տակ, կամ կասեցվել է նրա պաշտոնավարումը, ապա հավելավճարի հաշվարկման ժամկետն այդ ժամանակահատվածում կասեցվում է: Այն վերսկսվում է սույն մասում նշված հանգամանքները վերանալու օրվանից:

22. Ծառայության ծառայողներին սույն հոդվածով սահմանված ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի չափերը և վճարման կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ: Հավելավճարի հաշվարկման կարգը և հաշվարկված հավելավճարի վճարումը դադարեցնելու հիմքերը սահմանվում են վարչապետի որոշմամբ: Հաստիքային գաղտնի աշխատակիցներով համալրվող համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման գործունեության և գործառույթների առանձնահատկություններով պայմանավորված՝ ծառայության պետի հրամանով կարող են սահմանվել ատեստավորման անցկացման գործընթացի առանձնահատկություններ:

23. Սույն հոդվածի համաձայն՝ հավելավճար հաշվարկվելու դեպքում ծառայողների համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված լրավճարը և զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար նախատեսված հավելումները չեն հաշվարկվում: Հավելավճար հաշվարկելու իրավունք ձեռք չբերելու կամ հավելավճարի վճարումը դադարելու դեպքերում ծառայողների համար հաշվարկվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված լրավճարը և զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար նախատեսված հավելումները:

~~Հոդված 18. Ծառայության ծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանվածությունը~~

~~Ծառայության ծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանվածությունն իրականացվում է ազգային անվտանգության մարմիններում ծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության հարաբերությունները կարգավորող օրենսդրությանը համապատասխան:~~

Հոդված 18. Ծառայության ծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանվածությունը

1. Ծառայության ծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանվածությունն իրականացվում է ազգային անվտանգության մարմիններում ծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության հարաբերությունները կարգավորող օրենսդրությանը համապատասխան: Ընդ որում՝ Ծառայության ծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանվածությունն իրականացվում է նույն ծավալով և ընթացակարգերով, ինչպես ազգային անվտանգության մարմիններում ծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովությունը:

2. Ծառայության ծառայողները և նրանց ընտանիքի անդամները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովվում են բժշկական օգնությամբ՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության գերատեսչական ռազմաբժշկական հաստատությունում:

ԳԼՈՒԽ 5.

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հոդված 19. Ֆիզիկական ուժի գործադրման, հատուկ միջոցների և զենքի կիրառման պայմանները

1. Ծառայության ծառայողներն իրավունք ունեն ~~ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք գործադրել~~ **ֆիզիկական ուժ գործադրել, հատուկ միջոցներ և զենք կիրառել** սույն օրենքով նախատեսված կարգով և դեպքերում, եթե այլ միջոցներ չեն ապահովում ծառայության վրա դրված պարտականությունների կատարումը:

~~Ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և (կամ) զենք գործադրելու~~ **Ֆիզիկական ուժ գործադրելու, հատուկ միջոցներ և (կամ) զենք կիրառելու** ընտրություն կատարելիս ծառայության ծառայողն առաջնորդվում է՝ ելնելով ստեղծված իրավիճակից, իրավախախտման բնույթից և իրավախախտի անձից:

2. ~~Ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և (կամ) զենք գործադրելիս~~ **Ֆիզիկական ուժ գործադրելիս, հատուկ միջոցներ և (կամ) զենք կիրառելիս** ծառայության ծառայողը պարտավոր է՝

1) նախազգուշացնել դրանք ~~օգտագործելու~~ **գործադրելու (կիրառելու)** մասին՝ անձին բավարար ժամանակ տրամադրելով իր պահանջների կատարման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հապաղումն անմիջական վտանգ է ստեղծում պետական պահպանության օբյեկտների, ծառայության կամ պահպանական միջոցառումների անցկացմանը ներգրավված մյուս ծառայողների և այլ անձանց կյանքի կամ առողջության համար, կամ երբ ստեղծված իրադրությունում նման նախազգուշացումն անհնար է.

2) դրանք գործադրել **(կիրառել)** իրավախախտման կամ դիմադրության վտանգավորության բնույթին և աստիճանին համաչափ, ձգտել, որպեսզի իրավախախտին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի.

3) մարմնական վնասվածքներ ստացած անձանց ցույց տալ առաջին օգնություն:

3. Ծառայության ծառայողները պատասխանատվություն չեն կրում սույն օրենքով նախատեսված դեպքերում գործադրված ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և (կամ) զենքի կիրառման համար, եթե տվյալ դեպքում չի կատարվել անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության սահմանների անցում կամ հանցագործություն կատարած անձի ձերբակալման համար անհրաժեշտ միջոցառումների գերազանցում:

4. Լիազորությունների գերազանցմամբ ~~ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և (կամ) հրազենի գործադրումն~~ **ֆիզիկական ուժի գործադրումը, հատուկ միջոցների և (կամ) հրազենի կիրառումն** առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Հոդված 21. Հատուկ միջոցների ~~օգտագործումը~~ **կիրառումը**

1. Ծառայության ծառայողները, անձամբ կամ ստորաբաժանման կազմում ծառայողական պարտականությունները կատարելիս, իրավունք ունեն հատուկ միջոցներ ~~օգտագործել~~ **կիրառել** հետևյալ դեպքերում.

1) պետական պահպանության օբյեկտների վրա հարձակմանը կամ հարձակման ~~վտանգին~~ **սպառնալիքին** դիմակայելիս.

2) ծառայության ծառայողների և քաղաքացիների անվտանգությունն ապահովող պետական այլ մարմինների ծառայողների վրա հարձակումը կամ հարձակման սպառնալիքը կամ ցույց տրվող դիմադրությունը կանխելիս.

3) պահպանվող օբյեկտների և տրանսպորտային միջոցների վրա հարձակմանը կամ հարձակման ~~վտանգին~~ **սպառնալիքին** դիմակայելիս.

4) օրինազանցներին և այլ անձանց ձերբակալելիս, որոնց հանդեպ անհրաժեշտ հիմքեր կան ենթադրելու, որ նրանք հակված են ցույց տալու զինված դիմադրություն կամ խոչընդոտելու ծառայության ծառայողների պարտականությունները կատարելուն, ինչպես նաև նրանց համապատասխան մարմիններ բերման ենթարկելիս:

Բացի այդ, հատուկ միջոցներ կարող են ~~օգտագործվել~~ **կիրառվել** սույն օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված դեպքերում:

1.1. Սույն օրենքի իմաստով հարձակում կամ հարձակման սպառնալիք է համարվում յուրաքանչյուր գործողություն, որը կարող է մարդու մահ կամ առողջությանը վնաս պատճառել և կատարվել է ինչպես ցանկացած տեսակի զենքի կիրառմամբ, կամ այնպիսի առարկաների կիրառմամբ, որոնք կառուցվածքով նման են իսկական զենքի կամ արտաքնապես չեն տարբերվում դրանից, կամ այլ առարկաների (նյութերի) կամ մեխանիզմների կիրառմամբ, այնպես էլ առանց դրանց:

2. Արգելվում է հատուկ միջոցների ~~գործադրումը~~ **կիրառումը** հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և ծառայողի կյանքին և առողջությանն իրական վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:

3. Անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում հատուկ միջոցների կամ զենքի բացակայության պայմաններում ծառայության ծառայողն իրավունք ունի ~~օգտագործել~~ **կիրառել** ձեռքի տակ եղած բոլոր հնարավոր միջոցները:

Հոդված 22. Զենքի կիրառումը ~~և օգտագործումը~~

1. Ծառայության ծառայողները, որպես ծայրահեղ միջոցառում, անձամբ կամ ստորաբաժանման կազմում իրավասու են զենք կիրառել՝

1) պետական պահպանության օբյեկտների կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող հարձակումը կամ հարձակման սպառնալիքը կանխելիս.

2) ծառայության ծառայողների և պահպանական միջոցառումների ապահովման համար ներգրավված այլ մարմնի ծառայողների վրա հարձակումը կամ հարձակման սպառնալիքը կանխելիս, եթե նրանց կյանքին և առողջությանը վտանգ է սպառնում, ինչպես նաև նրանց զենքին տիրանալու փորձը կանխելիս.

3) պահպանվող օբյեկտների և տրանսպորտային միջոցների վրա հարձակմանը կամ հարձակման սպառնալիքին դիմակայելիս.

4) պատանդներին ազատելիս, ահաբեկչական և այլ հանցավոր ոտնձգությունները կանխելիս.

5) տրանսպորտային միջոցները վնասելով կանգնեցնելիս, եթե վարորդն իրական վտանգ է ստեղծում պետական պահպանության օբյեկտների կյանքի և առողջության նկատմամբ և չի ենթարկվում ծառայողի՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու ազդանշաններին.

6) պետական պահպանության օբյեկտների և այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանն անմիջականորեն սպառնացող կենդանիներին վնասազերծելիս.

7) զենք ~~օգտագործելու~~ կիրառելու մտադրության մասին նախազգուշական կրակոց արձակելիս, տագնապ հայտարարելիս կամ օգնություն կանչելիս:

2. Արգելվում է զենքի գործադրումը հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և ծառայողի կյանքին ու առողջությանն իրական վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:

Մերկացրած զենքով ձերբակալում կատարող ծառայության ծառայողին մոտենալու (նրա կողմից պահանջված հեռավորությունը խախտելու միջոցով), առանց թույլտվության անսպասելի կտրուկ շարժում կատարելու, ձեռքերը գրպանները տանելու կամ զենքին ձեռք մեկնելու՝ ձերբակալվողի ցանկացած փորձ ծառայության ծառայողին իրավունք է տալիս առանց նախազգուշացման՝ զենք գործադրել օրենքով սահմանված կարգով:

~~Զենքի կիրառման բոլոր դեպքերի մասին ծառայության ծառայողը պարտավոր է զեկուցել իր անմիջական ղեկավարին:~~

Զենքի կիրառման բոլոր դեպքերի մասին ծառայության ծառայողը պարտավոր է անհապաղ զեկուցել իր անմիջական ղեկավարին: Զենքի կիրառման բոլոր դեպքերի մասին Ծառայությունը անհապաղ տեղյակ է պահում տվյալ տարածքի դատախազին:

Հոդված 24. Ծառայության նյութատեխնիկական և այլ ապահովումը

Ծառայության նյութատեխնիկական ապահովումը, ծառայողների և քաղաքացիական աշխատանք կատարող ու տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց բնակարանային, կենցաղային, սննդի, նյութական օգնության, խրախուսման և սոցիալական այլ պահանջմունքների բավարարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենսդրությամբ սահմանված այլ միջոցների~~, այդ թվում՝ պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցելու դիմաց ստացվող միջոցների~~ հաշվին: